

կը ջախջախուի այն գլուխը՝ որ աւելի քան վաթսուներեւինգ տարի հակեցաւ գրգռելու, հայկական ձեռագիրներու վերայ, ու արտադրեց, թարգմանեց, ստեղծագործեց, խանդավառեց, եւ սիրցուց հայ գրականութիւնը եւ հայ ազգը՝ հայուն եւ օտարին:

Եղբրական դէպքը տեղի կ'ունենայ Յունիս 8, կէսօրուան ժամը 2,30-ին: Օթէլ Տիէօ հիւանդանոցը կը փոխադրուի իսկոյն վիրաւորը: Բարեկամներ կը փութան կարգադրութիւններ ընել իր անչնչացած մարմնոյն եւ գոյքերու մասին: Ամուրի, մենակեաց մը՝ աւելի հարազատ արտայայտութեամբ տալու համար իր կեանքի պայմանը: Ան նուիրուած մըն էր հայ գրականութեան: Իր պաշտամունքն էր գեղարուեստը եւ գրականութիւնը՝ հայկական եւ միջազգային:

* * *

Կը սերէր Ակնայ Հովուեանց հին գերդաստանէն, որ տուած էր մտաւորականներ եւ ամիրաներ: Ծնած էր Պոլիս 1872, Յուլիս 15-ին: Տակաւին հաղիւ միամեայ զրկուած մօր մը խանդաղատանքէն, զգացած է ամբողջ կեանքին մէջ խռոր բաց մը իր սրտին պատմութեան մէջ: Քերթուածներով կամ այլ առիթներով չեղած էր այդ տխուր պարագան:

Պէշկիթաշ էր իր բուն ծննդավայրը: Հոն է որ իր նախնական ուսումները կատարած է թաղային դպրոցին մէջ, եւ յետոյ շարունակած եւ լրացուցած է իր միջնակարգ վարժարանի զարգացումը Ղալաթիոյ Կեդրոնականին մէջ: 1887-ին կը մտնէ հոն եւ 1891-ին կ'ելլէ շրջանաւարտ: Բայց իր դպրոցական կեանքը եղած է միանգամայն գրական արտադրութեանց շրջան մը: Բացառիկ աշխուժութեամբ, գիտակցութեամբ, ճաշակով օժտուած պատանի մըն էր արդէն այն ատենէն Արշակ Զօպանեան, որ միացնելով իր այդ բնածին կարողութիւններուն՝ նաեւ մե-

թոտ, աշխատասիրութիւն եւ ատաղձ ու հմտութիւն, արդիւնք իր անընդհատ ընթերցումներուն, իջաւ գրական ասպարէզը շատ կանուխէն:

1889-ին է որ առաջին անգամ «Արեւելք»-ի մէջ կ'երևի թարգմանութիւններով Տօտէէն, Ֆլուպեռէն, Զոլայէն, Կոթիէէն: Կու տայ նկարագրական էջեր, նորավէպեր եւ բանաստեղծութիւններ, ստորագրելով յաճախ Փանքազիօ ծածկանունը:

Այս շրջանին արդէն իր արձակները, բանաստեղծական գոյնով հարուստ, եւ մտածութեամբ խորանալու ձկտող, ինչպէս են օր. Երկնիքի ֆաւրան, Երջանկութեան աշխարհը, գործեր տասնութը տարեկան պատանիի, բեղուն գրագէտի մը ապագան կը նախագուշակեն արդէն: Կեդրոնականի տեսուէն էր Մինաս Զերադ, որ միայն քաջալերանք ունէր բերանը իր աշակերտին հանդէպ: Գրականութեանց եւ հայերէնի իր ուսուցիչն էր բանաստեղծ Թովմաս Թերզեան: Անհուն սէր, պաշտամունք ունեցած է Զօպանեան այս վերջինին համար: Անոր հոգին, անոր սիրտը, անոր աղնուական նկարագիրը, անոր գեղարուեստի ճաշակը, հանդէպ մեծ մտաւորականներու եւ ստեղծագործ հանճարներու տուած գեղեցկութիւններուն, գրուած են ու գիւթած պատանի Զօպանեանը, որ մինչեւ իր ծերունի հասակը պահած էր իր մեծ վարժապետէն խոր յանդանքի յիշատակներ: Յարգանքի եւ սիրոյ պարտականութիւն մը չէ՞ր իր այնքան դուրդուրանքով եւ տքնաջան աշխատանքով կատարած հրատարակութիւնը Թերզեանի բանաստեղծութիւններուն, իբր յետ մահու յուշարձան մը կաթուածահար քերթողին, մատնուած անկարողութեան իր իսկ ձեռքով մարմին տալու այդ հաւաքածոյին:

Թովմաս Թերզեան ստուգիւ գործած էր մեծ ազդեցութիւն անոր գեղարուեստական ճաշակի ձեւաւորման եւ հասունու-

թեան, եւ դուցէ անոր սերմանած սէրն ու փարումն է, հանդէպ հայ գրի եւ գրականութեան, որ անխախտելի կերպով դամեց Զօպանեանը գրասեղանին առջեւ ամբողջ կեանքովը:

Արիւիար Արիւարեան եւ Յովհաննէս Շահնազար կը հրաւիրեն իսկոյն շրջանաւարտ Զօպանեանը աշխատակցելու «Հայրենիք»-ին: Ու հոն է որ ան կը պարզէ իր ինքնութիւնը: Գրոնիկ, արձակ էջեր, բանաստեղծական փորձեր կը յաջորդեն մին միւսին: Ուրիշ թերթեր ալ կը բանան իրենց ծոցը երիտասարդ գրողին:

Իրապաշտ հոսանքի շրջանն էր: Զօպանեան դասական կրթութիւն մը առած եւ ուսման իր զգայնութեան հակումներ կրելով հանդերձ իր մէջ, որուն վկայ են իր անդրանիկ բանաստեղծութիւնները եւ արձակները, իմաստութիւնն ունեցաւ ժամանակին հետեւելու: Իր Թուղթի փառքը, հոգեբանական վիպակ կոչուած իրմէ, այդ հոսանքին ծառայութիւն մըն է: Աղետարզ գալարումները՝ երիտասարդ գրողի մը սիրոյ պահանջին եւ ալեծփումներուն դիմաց, իրապաշտ գոյներով պատկերացուած, յայտնեցին անոր վիպելու կարողութիւնը եւ շնորհքը: Վէպը կամ վիպակը, սակայն, իր մարդը չէր: Նորավէպի փորձն ալ ըրաւ, եւ շարք մը տուաւ անոնցմէ «Հայրենիք»-ին մէջ: Մութ խաւեր թատերախաղն ալ, որ յաջորդեց անոր, դարձեալ նպատակ ունէր իրապաշտ արուեստին ցանցերը զօրացնելու: Նկարագրական էջերու մէջ գտաւ աւելի յաջողութիւն եւ իրապաշտ պատկերացումներով խօսեցաւ թշուառներու կեանքէն, պոլսական բարքերէն: Իր բանաստեղծութիւնն ալ, որոնց ակնարկեցինք, երիտասարդական ապրումներու սահմանին մէջ մնացին:

Այս ամէնը կը կազմեն առաջին շրջանը Զօպանեանի գրականութեան: Կարելի է ըսել նախափորձերու շրջանը:

Ան իր հունը գտաւ հրապարակագրութեան եւ քննադատութեան մէջ:

Այլեւս փորձառու, հասուն, տեսութիւնները աւելի ընդարձակած գրագէտն է որ կը յայտնուի: Գրական-քննադատական առաջին գործը Պետրոս Դուրեանի նուիրուած էր: Պետրոս Դուրեան ուսման իր քերթասարգութեան նախասիրած դէմքն էր. Զօպանեան համապատասխանելով այն գուրգուրալից սիրոյն՝ որով պաշարուած էր այն, գծագրեց անոր ողբերգական դէմքը, վերլուծեց բանաստեղծութիւնը եւ անոր ընդմէջէն ցոլացուց այն թշուառ եւ մեծ հոգին, որ երգեց ահաւոր «Տրտուելքը», որ անցաւ հայ գրականութեան ևրկնակամարէն. ասուպի մը պէս: Գործը տպագրուեցաւ Թիֆլիս, 1894-ին:

Զօպանեան հայ մամուլին մէջ ճանչցուեցաւ աստով արդէն գրական քննադատ:

Ասիկա եղաւ իր տիրական գիծը, չեղտուած իր յաջորդ արտադրութիւններուն մէջ: Կարծես մոռցուեցան իր Արշալոյսի ձայներ (1891), եւ Թրքոսումներ (1892) բանաստեղծութիւնները, որոնց ինքը այնքան կարեւորութիւն կու տար: Ազգային բանաստեղծը, նախասիրուած տխուր իրմէ, եւ որուն ապացոյցը եղաւ ամբողջական հաւաքածոն իր քերթուածներուն, կը մնայ անշուք, իր միւս կարգի գործերուն քով, որոնք հրապարակը ողողեցին:

Հրապարակագիրը շեղուեցաւ իր մէջ հիմնարկով «Ծագիկ» կիսամսեային: Ու աւելի ուշ իր «Անահիտ»-ին (1898), որ տեւեց գրեթէ այնքան՝ որքան ինքը: Հոն էր որ իր մտքին ճոխութիւնը բացաւ, դատեց, քննադատեց, հարուածեց, գովեց ու քաջալերեց գրողները: Հայ գրքին եւ գրականութեան վերահսկիչի դերը կատարեց ան լրջութեամբ, դուցէ երբեմն միամիտ պարզութեամբ մ'ալ, պարզապէս արծարծելու համար սէր, խանդավառութիւն՝ հակառակ անոնց՝ որոնք ջլացնել

կը ջանային երիտասարդներու մէջ նուիրական յարումը, եւ նաեւ բնածին հակումը ուսման, գուրկ ինքզինքնին պարտադրելու քաջութենէն:

1895-ին արդէն կը գտնուէր Փարիզ, լոյսի կեդրոնը, Համիտեան աղէտէն խուսափելով: Իր բարեկամութիւնը քաղաքական անձնաւորութիւններու հետ, գրական դէմքերու հետ, նոր շրջան մը բացին իր առջեւ: Եւ նոր զբաղանք իր գրչին եւ հոգւոյն եռանդին: Հայկական հարցը իր մըտաւեւութեամբ եղաւ: Խօսքով եւ գրով պաշտպանեց իր ազգը, ծանօթացուց զայն եւրոպական միջավայրին մէջ՝ պրոչիւրներով եւ հրատարակութիւններով մեծահասոր գործերու: Ֆրանսերէն եղան այդ կարգի հրատարակութիւնները, ինչպէս Հայ աշուղները, Հայ ժողովրդական երգերը, եւ հոսկ իր հիւսնալի Վարդեմիքը, որուն երեք հատորները միայն իր կենդանութեանը կըրցաւ լոյս բնայել: Հոս կը բանայ ան մեր միջնադարեան բանաստեղծութեան գանձերը, գեղեցկութիւնները օտարին առջեւ, Փրանսերէնի թարգմանելով այդ գմայլելի տաղերը:

Զօպանեան ամէն տեղ է: Ուր կայ հայ ազգի փառքը յաւերժացնող կոթող մը, կամ սուգը ողբերգող դրուագ մը, ինքը հոն է իր սրտին բովանդակ ոգեւորութեամբը, ջերմութեամբը իր հոգւոյն: Կը մասնակցի գրական համագումարներու՝ ներկայացնելու համար իր ազգը: Ազգային համագումարներու մէջ, Կիլիկիա եւ Արեւելք ըրած իր ճամբորդութիւններու ընթացքին՝ կը տանի հետը իր մտքին լայն տեսութիւնները, շարժում եւ խանդավառութիւն ստեղծելու համար:

Բայց հայ ժողովուրդին ալ, եւ հայ գրական հասարակութիւնը մանաւանդ՝ չուրացաւ այդ մեծ գրագէտին արժանիքները: Ազգը գիտցաւ գնահատել իր վաստակաւորին արդիւնքը: 1923-ին տօնուե-

ցաւ իր 25-ամեայ գրական յոբելեանը, յաջորդաբար տօնուեցան իր երեսունհինգամեայ, յիսնամեայ եւ վաթսնհինգամեայ յոբելեանները, թէ՛ իրրեւ երախտագիտութիւն անոր հանդէպ, եւ թէ՛ արժանաւոր հասոյթ մը գոյացնելու համար անոր մեծակեացի կեանքին ի նպաստ:

Ֆրանսական կառավարութենէն պատուում էր պատուոյ լէգէոնի շքանշանով:

Անմոռանալի էր իր սրտին բարութիւնը, եւ իր հոգածութիւնը թշուառ գաղթականներու հանդէպ՝ որ ողողած էին Ֆրանսան: Ինքը Նախագահն էր Գաղթականաց Յանձնաժողովին, եւ այդ պատճառաւ ալ յաճախ ճամբորդած Լոզան, Ժընեւ:

Ազնիւ հոգի մը, որ կը մոռնար չարիքը, եւ կը ներէր նոյնիսկ իր անձին հանդէպ եղած անարդարութիւններուն:

Հոս իր յիշատակը յարգելու համար տողուած այս Ուրուագիծը, նպատակ հունի ենթարկելու իր գործը գրական վերլուծումի: Անցողակի ըստած բաներ են միայն ասոնք, ուրիշ անգամուան թողլով վերլուծական մանրամասնութիւնը իր բանաստեղծի, արձակագրի, քննադատի, հրապարակագրի, փրփաղանտիստի արժանիքներուն նուիրումը:

Ինչ որ իրմէ կը մնայ՝ արդէն լայն հորիզոն ունի, եւ գուցէ տասը գրագէտներու գործի բաժին մը կայ հոն: Եթէ մանաւանդ իր անտիպները հրապարակելէն, ինչպէս ուրախութեամբ կ'իմանանք ազգէ մը՝ նախաձեռնութեամբ Ֆրանսիական Միութեան մը կամ Յանձնախումբի մը, այն ատեն աւելի լայն չափով մը երեւան պիտի գայ իր կատարած դերին մեծութիւնը: Այդ ձեռնարկը լաւագոյն յուշարձանը պիտի ըլլայ ողբալի գրագէտին յիշատակին նուիրումը:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

ԱԲԳԱՐԵԱՆ Մ. Վ. — Բազմաձայն եկեղեցական երգեր: Վիեննա, Միլիթ. տպ. 1954, էջ 39 մեծագիր:

ԱԴԴԱՐԵԱՆ Գ. — Պատնէշին վրայ (քերթումներ): Պէյրութ, տպ. Ատլաս, 1954, էջ 125:

ԱՂԱՃԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԿԹՂ. ՊԱՏՐԱՐԲ ՏԱՆԵՆ ԿԻԼԻԿԻՈՅ. — Թուղթ Հովուական: Պէյրութ, Հայ Կթղ. տպ. 1954, էջ 35:

ԳԱՐԵԿԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ. — Բաղդադի Սերասիոյ Գաւառակցութիւն: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեան, 1952, էջ 682:

ԳԻՌԳԵԱՆ ԿԱՐՈ. — Ամէնուն տարեգրքը. 1954, Ա. տարի: Պէյրութ, տպ. Հայկ եւ Մշակ, 1953, էջ 504:

ԵՂԻՇԷ. — Վարդանանց պատմութիւնը. (թարգմանութեամբ, ներածական ուսումնասիրութեամբ, եւ ծանօթութիւններով Պրոֆ. Դիտ. Տէր Միտասեանի): Գահիրէ, տպ. Յուսսուր, 1950, էջ 322:

ԷՕԶԷՐ ԱՆԳԱՆ. — Ահա՛ այսպէս: Իսթանպուլ, 1953:

ԹԱՇՏԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ. — Սեւ յուշեր մղձաւան-ջային եօթը տարիներու (1915-1922): Պէյրութ, տպ. Սարգիսեան, 1952, էջ 164:

ԼԱԼԱՅԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ. — Արա գեղեցիկ (աւանդակ): Պէյրութ, տպ. Մշակ, 1953, էջ 27:

ԽԱՆՁԵԱՆ ԳՐԻԳՈՐ. — Մալաթիոյ Գաւառաբար-բառը: (Հրտ. Մալաթիոյ Կրթատիրաց Ընկերութեան Հարազատ Հատուածի կեդր. վարչութեան):

ՃԻՌԵԱՆ ՅՈՎՍԷՓ. — Երկունքի շիթեր (քերթումներ): Պէյրութ, տպ. Շիրակ, 1952:

ՄԱԼԽԱՍ. — Ապրումներ: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1931, էջ 510:

ՄԱԼԽԱՍ. — Լուսաղէտի: Ա. Հատոր: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1935, էջ 304:

ՄԱԼԽԱՍ. — Զարթոյն: Հա. Ա-Ե: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1933-1934:

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՈՆ ԵՊԻՍԿ. — Քրիստոնէական ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՈՆ ԵՊԻՍԿ. — Պուշտու վարդապետութիւն: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1954, էջ 162:

ԱՅՐԷԱՍ, տպ. Արարատ, Վր. — Հայ կեդրոն ՄՈՒՇԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ 1954: Պուշտու Այրէս, տպ. Տարեցոյց: 1953 եւ 1954: Պուշտու Այրէս, էջ 343+368:

ՆԱՐԳՈՒՆԻ ՇԱՐԼ. — Ոգին Հայկազանց: Գա-նարեան, տպ. Յուսսուր, 1954, էջ 46:

ՈՍԿԵԱՆ Հ. ՀԱՄԱԶԱՍՊ. — Հայ հոգէն ու ջուրէն, քաղաքէն ու գիւղէն: Պէյրութ, տպ. Մը-շակ, 1954, էջ 80:

ՉՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. — Պատկերներ: Փարիզ, տպ. Արաբս, 1940, էջ 110:

ՉՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. — Կեանք եւ երազ: Փարիզ, տպ. Արաբս, 1945, էջ 110:

ՉՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. — Բամբասանք: Թատերա-խաղ հինգ արարուածով: Փարիզ, 1950, էջ 106:

ՉՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. — Բանաստեղծութիւններ: Փարիզ, տպ. Արաբս, 1950, էջ 352:

ՉՈՊԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ. — Հրաշքը: Թատերադրու-թիւն հինգ արարուածով: Պէյրութ, տպ. Տօ-նիկեան, 1952, էջ 98:

ՊԱՐՍԱՄԵԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ. — Մարդկային: Փա-րիզ, էջ 86:

ՊԱՐՍԱՄԵԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ. — Մարմնեղբորին: Փարիզ, 1919:

ՊԵՆԷԵԱՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆՅ. — Տեղադրու-թիւն Մալաթիոյ կամ Մելիտինէի (էջ 240): (Հրտ. Մալաթիոյ Կրթատիրաց Ընկերութեան Հարազատ Հատուածի կեդր. վարչութեան):

ՊՈՂԱՐԵԱՆ ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿ. — Մայր Յուցակ Զեռարաց Սրբոց Յակոբեանց: Բ. Հատոր: Ե-րուսաղէմ, տպ. Ս. Յակոբեան, 1953, էջ 293:

ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ ՓՐՈՅ. ՅՈՎՀ. — Տիպար քա-ղաքային: Անթիլիաս, տպ. Կթղ. Հայոց, 1953, էջ 37:

ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ ՓՐՈՅ. ՅՈՎՀ. — Ընտանիքի վերլուծումներ: Պէյրութ, տպ. Տօնիկեան, 1953, էջ 27:

ՊՈՒՐՍԱԼԵԱՆ Յ. Գ. — Մուսա-լեւան հերոսա-մարտը: Հալէպ, տպ. Արեւելք, 1954, էջ 89:

ՊՈՒՇԵԱՆ ՊԵՐՃ. — Սոս եւ Վարդիթեր: Երե-ւան, Հայկապատ, 1953, էջ 376:

ՍԱԳԻՆԵԱՆ ՉՈՐԱ. — Անցեալը: Թեհրան, տպ. Մոզէրն, 1953, էջ 62:

ՍԱԳԻՆԵԱՆ ՉՈՐԱ. — Երեւոյթներ: Թեհրան, տպ. Մոզէրն, 1953, էջ 100:

ՍԱՐԱՅԵԱՆ ԳԻՌԳ. Ա. .. Պատմութիւն Անթիլի-Հայոց: Հատոր Ա-Բ: Լոս Անճէլըս, 1953, էջ 1088+806:

ՍԻՄԵԱՆԹՈ. — Ամբողջական գործեր: Գահիրէ, տպ. Յուսսուր, 1954, էջ 504:

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Ազգային վեհաժող-վեհաժող — Ս. Ղազար, 1953, էջ 263: